

Հրանդ Տիևը Ոգեկոչուեցաւ Թորոնթոյի Եկեղեցիներուն Սէ

Յարութիւն Դերձակեան

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով, Գանատահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ Ս. Եպս. Գալստանեանի տնօրինութեամբ, ինչպէս նաեւ Պոլսահայ Մշակութային Միութեան խնդրանքին համաձայն 20 Յունուար 2008, Կիրակի առաւօտ, Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ մէջ յաւարտ Ս. պատարագի մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն տեղի ունեցաւ ողբացեալ՝ Հրանդ Տիևքի մահուան առաջին տարելիցին լրման առթիւ:

Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեան խօսեցաւ հաղորդական ոճով, տպաւորիչ քարոզ մը, բնաբան առնելով՝ Սատթեոսի 5-րդ համարէն «Երանի՛ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը»: Տէր Հայրը իր խօսքերը շարունակելով ըսաւ, «Չէք կրնար սպաննել արդարութիւնն ու ճշմարտութիւնը, որքան ցաւալի է որ ճշմարտութեան վկայ մը կը հալածուի այսօր իր ծնած հողերուն վրայ, այդ պետութեան տարածքին մէջ: Հրանդ Տիևք կ'ուզէր ճշմարտութիւն մը հաստատել, կ'ուզէր որ մարդ արարածը իրաւունք ունենայ բարձրաձայն արտայայտուելու երեւոյթներու մասին որոնք ճշմարտութիւն չեն, երեւոյթներ որոնք կը թունաւորեն մարդ արարածին կեանքը, պահանջելով արդարութիւն, խօսքի ազատութիւն եւ մամուլի ազատութիւն: Երանի անոնց որ յաղթութեան, ճշմարտութեան, արդարութեան, սրբութեան վկան կը դառնան»:

Տէր Հայրը նմանցնելով Վարդան Սամիկոնեանի իմացեալ մահուան, անմահութեան- աւելցուց «Այդ անմահութեամբ գացին վարդանանք, այդ անմահութեան գացին բոլոր նահատակները եւ այդ անմահութեան գնաց նաեւ Հրանդ Տիևք»: Եւ մաղթեց որ մեր բոլոր նահատակներուն եւ նաեւ Հրանդ Տիևքի յիշատակը անմահ մնայ մեր կեանքին մէջ:

Յաւարտ Ս. Պատարագի եկեղեցոյ «Մակարոս Արթիւնեան» սրահին մէջ կազմակերպութեամբ՝ Պոլսահայ Մշակութային Միութեան տեղի ունեցաւ ընդունելութիւն եւ ոգեկոչման հանդիսութիւն: Հանդիսութեան կը նախագահէր՝ Արժ. Տ. Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեան, իր հետ ունենալով օգնական Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Կիլեանը:

Օրուայ հանդիսավառ՝ Սկրտիչ Սկրտիչեան ձեռնհասօրէն վարեց հանդիսութիւնը: Ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լռութեան հրաւիրելէ յետոյ, անդրադարձաւ Հրանդ Տիևքի կեանքին, ասպարեզին, ունեցած զանազան դժուարութիւններուն, մտքի թռիչքներուն եւ ստացած զանազան պարգէւներուն մասին:

Յուցադրուեցան Թուզլայի Քամփի եւ Հրանդ Տիևքի 2002 Թուականին Թորոնթոյի հայութեան հետ ունեցած հանդիպումին տեսաերիզները:

Այնուհետեւ Սկրտիչ Սկրտիչեան կարդաց «ՍԱՐՍԱՐԱ» օրաթերթի արտօնատէր եւ խմբագրապետ Ռոպեր Հատտեճեանի 19 Յունուար 2008, Շաբաթ օրուայ «ՍԱՐՍԱՐԱ»-ի մէջ լոյս տեսած «Հրանդին լռութիւնն ու բացակայութիւնը» խորագրով բացառիկ տպաւորիչ եւ նոյնքան ալ յուզիչ գրութիւնը, տպաւորելով բոլոր ներկաները:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ Տէր Զարեհի սրտի խօսքով ու աղօթքով: Ապա ծաղիկներ գետեղուեցան Ազատութեան Յուշարձանին վրայ: